ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 հունիսի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

76
(2926)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

22 ԱՆԳԱՄ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է ՎԱՐՉԱՊԵՏՐՈՒԹՅՈՒՆԸ

2018 թվականից քաղաքական «Թավշյա հեղափոխությունից» հետո ՀՀ կրթության եւ գիտության նախկին նախարար, վարչապետի նախկին գլխավոր խորհրդական, 2021 թվականի հուլիսի 1-ից վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ըստ 2023 թվականի եկամուտների, գույքի, շահերի եւ ծախսերի մասին հայտարարագրի, ՀՀ վարչապետի աշխատակազմից ստանում է 22 մլն 488 հազար դրամ աշխատանքի վարձատրություն:

Նախկինում՝ մինչեւ հեղափոխությունը, ոչնչով աչքի չընկած ԵՊՀ դասախոս Արայիկ Հարությունյանը 2018 թվականին, երբ ԿԳ նախարար էր դառնում, ստանում էր ընդամենը տարեկան գրեթե 680 հազար դրամ աշխատանքի վարձատրություն ԵՊՀ-ից: Սակայն տարբեր պաշտոններում պաշտոնավարման այս 6 տարիների ընթացքում Արայիկ Հարությունյանի աշխատանքի վարձատրությունը 22 անգամ ավելացել է՝ դառնալով տարեկան 22 մլն 488 հազար դրամ: Վարչապետի աշխատակազմի ղեկավարը 2022 թվականին ձեռք է բերել հողամաս Կոտայքի մարզի Նաիրի համայնքում, որի արժեքը կազմել է 8 մլն 320 հազար դրամ: Արայիկ Հարությունյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 10 մլն 411 հազար դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4 մլն դրամով: 2022 թվականին առկա կանխիկ դրամական միջոցները՝ 150 հազար դրամը, այս տարի նվազել է՝ դառնալով 100 հազար դրամ: Արայիկ Հարությունյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 27 մլն 017 հազար դրամ, որը, ինչպես հասկանում ենք, բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է, որի համար աշխատակազմի ղեկավարը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 3 մլն 016 հազար դրամ գումար՝ եկամտահարկի վերադարձի օրենքով՝ հիփոթեքի մայր գումարի մնացորդը մարելու համար:

Խորհրդարանն ավարտում է այս նստաշրջանի իր աշխատանքները. հաջորդ շաբաթ մեկնարկելիք քառօրյա նիստերից հետո պատգամավորներն արձակուրդի կանցնեն: ԱԺ աշնանային նստաշրջանը արդեն կմեկնարկի սեպտեմբերից: Հնարավոր է՝ այդ ընթացքում պատգամավորները կամ գործադիրը ԱԺ արտահերթ նիստեր հրավիրելու նախաձեռնությամբ հանդես գան, բայց հաջորդ շաբաթվա քառօրյա նիստերով ԱԺ-ն պաշտոնապես կավարտի իր աշխատանքները եւ «արձակուրդ» կգնա: ԱԺ քառօրյա նիստերը մեկնարկում են երեքշաբթի՝ հունիսի 9-ից: Այս նիստերի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, ընդգրկված է նաեւ Վճռաբեկ դատարանի դատավորի ընտրության հարցը, թեկնածուներն են Արմեն Դանիելյանը, Ռուբիկ Մխիթարյանը եւ Մանվել Շահվերդյանը: Մինչեւ նիստերի մեկնարկը՝ երկուշաբթի օրը, ՔՊ-ականները ֆրակցիայի նիստ կանեն՝ ԱԺ քառօրյա նստաշրջանի օրակարգային հարցերի շուրջ քննարկում ունենալու համար, կորոշեն նաեւ՝ որ դատավորի թեկնածուներից ում են ընտրելու:



Փաստաբանների հանդիպումն ԱԺ ՔՊ-ական պատգամավորների հետ այդքան էլ արդյունավետ չի անցել, ու վերջիններս հանդիպումից հետո վստահ են, որ խնդրահարույց օրենքը երկրորդ ընթերցմամբ կընդունվի, ու իրավիճակից կտուժեն ՀՀ քաղաքացիները: Ուստի, փաստաբանական համայնքում կրկին կրքեր են թեժանալու. տեսնենք, թե որն էլ լինելու նրանց հաջորդ քայլը: Ինչպես հայտնի է, Փաստաբանական համայնքը մայիսի 21-ին գործադուլ էր հայտարարել: Նրանք հրաժարվել են ՀՀ պետական մարմիններում, այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց: Փաստաբանները Ազգային ժողովից պահանջում են «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծից հանել փաստաբաններին վերաբերող խնդրահարույց իրավակարգավորումները: Նշենք, որ նախագծով նախատեսվում է փաստաբանական ծառայությունների մատուցումից առաջացող շրջանառության հարկը 2025 թվականի հունվարի 1-ից բացառել, ինչի հետեւանքով փաստաբանները հարկադրված են լինելու գործել հարկման ընդհանուր համակարգում, ըստ այդմ՝ մատուցվող փաստաբանական ծառայությունների համար լրացուցիչ կիրառվելու է 20 տոկոս ԱԱՀ (ավելացված արժեքի հարկ): Դրանից զատ՝ վճարվելու է նաեւ շահութահարկ, որի դրույքաչափը 18 տոկոս է: Այսինքն՝ փաստաբանական ծառայության գներն էապես կբարձրանան:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ տարբեր զինկոմիսարիատների մի շարք աշխատակիցներ պատրաստվում են ազատման դիմում գրելու: Բանն այն է, որ վերջիններս վարժական հավաքների կազմակերպման դժվարին գործն են անում խիստ ծանրաբեռնված ռեժիմով. հիմա էլ ամառային զորակոչն է մեկնարկելու ու գերլարված վիճակը ավելի կկրկնապատկվի: Ըստ նրանց՝ հատկապես քաղծառայողները այդ ամենը անում են ամսական 108.000 դրամ աշխատավարձի դիմաց. «Առավոտյան 9-ից մինչեւ 18:00 վազքի մեջ են, ու նրանց աշխատավարձի վերանայում չի եղել»: Եվ սա այն պայմաններում, երբ մեր երկրում նվազագույն սպառողական զամբյուղը բավականին թանկացել է, եւ այդ պայմաններով ուղղակի անհնարին է դարձել ապրելը զինկոմիսարիատի աշխատակիցների համար: «Ժողովուրդ» օրաթերթը այս հարցերի առնչությամբ դիմեց ՊՆ, սակայն նախարարությունից մեկնաբանություն չտվեցին մեր տեղեկության վերաբերյալ:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ ԿՈՐՈՇԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Ինչպես հայտնի է, փաստաբանական համայնքը մայիսի 21-ին գործադուլ էր հայտարարել: Նրանք հրաժարվել են ՀՀ պետական մարմիններում, այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց: Փաստաբանները պահանջում են Ազգային ժողովից «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծից հանել փաստաբաններին վերաբերող խնդրահարույց իրավակարգավորումները:

Նշենք, որ նախագծով նախատեսվում է փաստաբանական ծառայությունների մատուցումից առաջացող շրջանառության հարկը 2025 թվականի հունվարի 1-ից բացառել, ինչի հետեւանքով՝ փաստաբանները հարկադրված են լինելու գործել հարկման ընդհանուր համակարգում, ըստ այդմ՝ մատուցվող փաստաբանական ծառայությունների համար լրացուցիչ կիրառվելու է 20 տոկոս ԱԱՀ (ավելացված արժեքի հարկ): Դրանից զատ՝ վճարվելու է նաեւ շահութահարկ, որի դրույքաչափը 18 տոկոս է:

Նկատենք, որ այս նախագիծն ընդունվել է առաջին ընթերցմամբ եւ երկուշաբթի օրը քվեարկվելու է երկրորդ ընթերցմամբ:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Փաստաբանների պալատի փաստաբան Արմինե Ֆանյանի հետ:

-Տիկին, Ֆանյան նախագիծը այսօր առաջին ընթերցմամբ անցավ, սակայն փաստաբաններին հնարավորություն տվեցին հանդիպել նախագծի հեղինակների հետ Ազգային ժողովում՝ հասկանալու համար, թե ինչպես կարող են փոփոխության ենթարկել խնդրահարույց կետերը: Ի՞նչ քննարկվեց եւ ովքե՞ր էին ներկա:

-Ներկա էր Նոտարական պալատի ներկայացուցիչը, տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներ, Հարկային մարմնից կային ներկայացուիչներ: Քննարկվեցին մեր կողմից բարձրացված հարցերը, մենք մեր մտահոգությունները եւս մեկ անգամ ներկայացրինք, քանի որ որքան ուսումնասիրում ենք, այնքան ավելի մեծ խնդիրներ ենք հայտնաբերում: Ըստ էության, պատրաստակամություն հայտնեցին՝ ներքին քննարկման ընթացքում եւս մեկ անգամ անդրադառնալու բարձրացված հարցերին եւ տեսնելու՝ արդյոք կոնսենսուսային որեւէ տարբերակ կարող են գտնել, թե ոչ:

-Ազգային ժողով Փաստաբանների պալատից ովքե՞ր են գնացել:

-Ներկա էին Փաստաբանների պալատի նախագահը, տեղակալը եւ Հանրային պաշտպանի գրասենյակի նախագահ Գեւորգ Մկրտչյանը:

-Իսկ Ազգային ժողովի ներկայացուցիչներն ովքե՞ր էին:

-Պարոն Թունյանն էր եւ հարկային մարմնից ու նոտարական պալատից կային ներկայացուցիչներ, քանի որ այդ նախագիծը նաեւ իրենց է վերաբերում: Ինչպես նաեւ ներկա էին տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներ, ում բեռն այս նախագծով նույնպես ավելանում է: Հանդիպման ընթացքում ներկայացվել են խնդրահարույց հարցերը, հնչել են հարցադրումներ, որոնց սպառիչ կերպով պատասխանել ենք: Պատրաստակամություն են հայտնել ներքին քննարկման շրջանակներում անդրադառնալու այդ հարցերին եւ փորձելու կոնսենսուսային տարբերակներ գտնել, եթե հարկ համարեն:

-Նկատառմանը, որ նախագծի ընդունման հետեւանքով անպաշտպան են մնալու ՀՀ շարքային քաղաքացիները, բարձրաձայնվե՞ց:

-Այո՛, իհարկե, սակայն հեղինակներն ու նախագծի ընդունմամբ շահագրգռված անձինք ընդունում են, որ այդ խնդիրը կա, սակայն խնդիրը, կարծես, միայն մեզ է հուզում, քանի որ այդ նկատառման վրայից պետությունը շատ սահուն անցում է կատարում: Միայն փաստաբաններին է հուզում այն հարցը, որ քաղաքացու հարկային բեռը ավելացվելու է:

-Դուք հանդիպումից որեւէ սպասելիք ունե՞ք, առ այն, որ փաստաբանների մասով այդ կետը դուրս կգա:

-Ես անձնապես որեւէ սպասելիք չունեմ: Իմ տպավորությամբ՝ շատ կառուցողական քննարկում են ուզում անել, որովհետեւ մտահոգիչ է այն, ինչ ասում ենք, բայց իմ անձնական տպավորությունն այնպիսին է, որ ոչինչ չի փոխվելու, եւ պետության նպատակը փաստաբաններին ավելացված արժեքի հարկի դաշտ տեղափոխելն է: Պետությանը բաձարձակ չի հուզում, որ քաղաքացու իրավաբանական օգնություն ստանալու մատչելիությունը տուժելու է:

-Ո՞րն է լինելու բփաստաբանների հաջորդ քայլը:

-Դեռեւս քննարկում չի եղել: Առաջիկայում ակումբի նիստ կհրավիրենք եւ կհասկանանք մեր անելիքները:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴԻՐՔԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՂԵ՞Լ Է, ԹԵ՞ ՈՉ

Այդ տարածքում ծառայություն են իրականացնում սահմանապահ զորքերը. Դա սահմանապահ զորքերի հսկողության գոտի է: Այս մասին այսօր՝հունիսի 7-ին, ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը՝ անդրադառնալով հարցին,թե արդյոք Տավուշում սահմանազատումից հետո դիրքերի փոփոխություն եղել է, թե ոչ:

«Վերջին շրջանում չափից ավելի բաց, չափից ավելի թափանցիկ ենք աշխատում: Նախկինում եթե դժգոհում էիօն ինֆորմացիայի ոչ օպերատիվ տեղ հասնելուց, հիմա այդ խնդիրն էլ չկաԲոլոր տեսակի տվյալները տրամադրվում են, հանրությունը դրա մասին իրազեկվում է:

Դա հանդիսանում է սահմանապահների ծառայության վայր: Երրորդ բանակային կորպուսը գոյություն ունի: Բնականաբար, իրենք իրենց խնդիրներն ունեն, սահմանապահներն՝ իրենց»,-ասաց նա եւ հեռացավ՝ չպատասխանելով լրագրողների մյուս հարցերին:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Փաշինյանի աշխատակազմի ղեկավարն ԱԺ-ում անդրադառնալով սահմանների դելիմիտացիայի թեմային, բավականին վտանգավոր հայտարարություն է արել:

Վերջինս անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք ըմբռնում կա, որ Հայաստան-Ադրբեջան ողջ սահմանն է ճշգրտվելու նախապես հայտարարված 1976 թվականի քարտեզներով, թե այս պահին համաձայնությունը միայն Տավուշի մասով է, նշել է, որ 1976 թ-ի քարտեզը այս պահին ֆիքսված է միայն այս հատվածի սահմանազատման համար, հաջորդ հատվածների համար քննարկվում է:

Հիմա արդեն առավել քան պարզ է, թե ինչու էր իշխանությունը դելիմիտացիայի տրամաբանությանը դեմ գնում առանց ողջ սահմանի մասին համաձայնության տեղային սահմանային ճշգրտումներ սկսում:

Իհարկե խիստ չափազանցություն է այս գործընթացին սահմանային ճշգրտում անվանելը, սակայն սա գալիս է հաստատելու այն մտահոգությունը, որ Ադրբեջանը կոնկրետ գյուղերի մասով պահանջ է ներկայացրել, իսկ ՀՀ իշխանությունը դրանք միակողմանի զիջել է:

Երկրորդ, ստացվում է, որ Ադրբեջանը դելիմիտացիայի գործընթացին մոտենում է ընտրողաբար սահմանային տարբեր ուղղությունների մասով տարբերակված մոտեցում է ցուցաբերում՝ ըստ իր առաջնահերթությունների:

Երրորդ, իմ մոտ առավել ամրապնդվում է այն համոզմունքը, որ Ադրբեջանն ունի կոնկրետ տարածքային պահանջներ դրանց՝ փաշինյանական իշխանության բավարարումից հետո, գործընթացը տապալելու է:

Հետանքն այն է լինելու, որ Ադրբեջանը դելիմիտացիա/դեմարկացիայի անվան տակ խաղաղ ճանապարհով զիջումներ է կորզելու, սակայն դրանով ոչ միայն ՀՀ-ի անվտանգությունն ու կենսունակությունն է խիստ խոցելի դառնալու, այլ պատերազմի թեման բաց է մնալու կամ փոխանցվելու է հաջորդ սերունդներին:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ» ՄԱՍԻՆ

ՔՊ-ականները փորձում են համոզել, որ բան չմնաց երանելի «խաղաղության պայմանագիրը» կնքվում է? մինչդեռ Ադրբեջանը հստակ քաղաքականությամբ ցույց է տվել, որ ոչ մի պայմանագիր էլ չի ստորագրելու:

Այս մասին գրառում է արել ադրբեջանագետ Տաթիկ Հայրապետյանը:

«ՔՊ-ական իշխանամերձ վերլուծական մի ամբողջ համայնք լծված է համոզելու, որ բան չմնաց, մի քիչ էլ ենք զիջում ու երանելի «խաղաղության պայմանագիրը» կնքվում է: Շատ հավանական է, որ հենց նոյեմբերին էլ կնքվի, պնդում են հույսի վաճառականշառլատանները:

Մինչդեռ Ադրբեջանն այնքան պարզ տեքստով ու հստակ քաղաքականությամբ ցույց է տվել, որ ոչ մի պայմանագիր էլ չի ստորագրելու, ամեն հաջորդ կատարված երազանքից հետո նորն է դեմ տալու, մի անգամ կասի Խոջալուի թեմա, մյուս անգամ սահմանադրության հարց կբարձրացնի, մեկ այլ առիթով Սյունիքով արտատարածքային միջանցք կուզի ու այդպես շարունակ:

Չէ՞ որ այդ պետության նպատակն է հասնել Հայաստանի չգոյությանը կամ առնվազն ոչ կենսունակ հայկական պետության ձավորմանը: Հենց դրան էլ տանում է «խաղաղության պայմանագրի» ուղին՝ քայլ-քայլ, մաս-մաս... իսկ մենք կարող ենք շարունակել ինքներս մեզ խաբել ու հավատալ, որ հեսա մի հրաշք թուղթ կլինի, որ մեզ բոլոր խնդիրներից կազատի...», - գրել է նա:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ալիևն ամեն գնով չի կնքելու խաղաղության պայմանագիր, քանի դեռ ՀՀ-ում այնպիսի իշխանություն է, որն իր իշխանությունը պահելու համար պատրաստ է զիջել ամեն ինչ:

Այս մասին ֆեյսբուքյան էջում գրել է «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանը:

«Կա՞ որէ մեկը, որ դեռ չի հասկանում պարզ փաստը, որ Ալիևն ընդամենը անհնար է դարձնում ՀՀ քաղաքացիների կողմից Սահմանադրության փոփոխությանը կողմ քվեարկելը, երբ հայտարարում է դրա մասին՝ որպես խաղաղության նախապայման:

Ոչ թե ներքին քննարկումների ժամանակ է Նիկոլից պահանջում, որ նա հնարավորինս անաղմուկ ու հարթ առաջ տանի փոփոխությունը, այլ հրապարակային հայտարարում է:

Կա՞ որէ մեկը, որ դեռ չի հասկանում, որ Ալիևն ամեն գնով չի կնքելու խաղաղության պայմանագիր, քանի դեռ Հայաստանում այնպիսի իշխանություն է, որն իր իշխանությունը պահելու համար պատրաստ է զիջել ամեն ինչ (օրինակ, նոր տարածքներ) չպահանջել ոչինչ (օրինակ, գերիների վերադարձը)»,-գրել է նա:

ԱՄՆ ՎԻԶԱՅԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Միացյալ Նահանգները վիզային սահմանափակումներ է մտցնում Վրաստանի մի քանի տասնյակ քաղաքացիների, այդ թվում՝ իշխող «Վրացական երազանք» կուսակցության, խորհրդարանի անդամների իրավապահ մարմիններին նկատմամբ, հայտարարել է ԱՄՆ պետդեպարտամենտի խոսնակ Մեթյու Միլլերը՝նշելով, որ Վաշինգտոնը նրանց մեղադրում է ժողովրդավարությունը խարխլելու մեջ: Թբիլիսին Վաշինգտոնի այս քայլը «հերթական սխալ» է որակել:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ՝ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Եվրախորհրդարանի (ԵԽ) ընտրությունների ավարտից հետո Չինաստանից արտահանման վրա մի քանի մաքսատուրքեր սահմանելու ԵՄ մտադրությունը կարող է նրանց միջ առտրային պատերազմի բռնկում հրահրել: Նման կարծիք է հայտնել Bloomberg-ը:

Նրա խոսքով, ԵՄ-ի կողմից չինական էլեկտրական մեքենաների ներմուծման մաքսատուրքերի բարձրացումը «գրեթե անկասկած» ՉԺՀ-ի կողմից պատասխան գործողություններ կհրահրի: Պեկինը կարող է, օրինակ, նմանատիպ միջոցներ ձեռնարկել եվրոպական ավիացիոն գյուղատնտեսական արդյունաբերության դեմ: Այս զարգացումը, ի վերջո, կարող է «վերաճել առտրային պատերազմի», նշում է գործակալությունը:

Ավելի վաղ Bloomberg-ը, հղում անելով աղբյուրներին, հայտնել էր, որ ԵՄ-ն մինչ հուլիս կարող է ներմուծման նոր մաքսատուրքեր սահմանել Եվրոպա մուտք գործող չինական ապրանքների համար: Այս միջոցները պետք է փոխհատուցեն մի շարք ապրանքային կատեգորիաների արտահանման սուբսիդավորման Չինաստանի քաղաքականությունը: ԵՄ առաջնորդները հետաքննում են նա հողմային տուրբիններ արտադրող չինական ընկերությունները: Եվրոպական կողմը ձեռնարկություններին կասկածում է «անարդար սուբսիդիաներ պետական աջակցություն» օգտագործելու մեջ: Մինչ այս Եվրամիությունը նմանատիպ քայլեր էր ձեռնարկել չինական ֆոտովոլտային արտադրանքների Չինաստանից էլեկտրական մեքենաների հետ կապված: Չինաստանի առտրի նախարարությունը մերժել է ԵՄ բոլոր մեղադրանքները՝նշելով, որ եվրոպացի պաշտոնյաների գործողությունները «կհանգեցնեն բացասական հետանքների անորոշության Չինաստանի Եվրամիության միջ առտրատնտեսական հարաբերություններում»:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Երբեմնի «ականջ եւ լեզու կտրող» Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար եւ պատգամավոր Արթուր Հովհաննիսյանը, ըստ 2023 թվականի հաշվետու տարվա եկամուտների, գույքի, շահերի եւ ծախսերի հայտարարագրի, նոր բնակարան է ձեռք բերել:

Հեղափոխությունից հետո իշխանության եկած Հովհաննիսյանը պաշտոնավարման 6 տարիների ընթացքում միայն այս տարի է հայտարարագրել անշարժ գույք:

2023 թվականին ձեռք բերված անհատական բնակելի տունը գտնվում է Արարատի մարզի Մասիս համայնքում, այն ձեռք է բերվել 30 մլն դրամով:

ԱԺ պատգամավորի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 38 մլն 867 հազար դրամ, որի մեջ ներառված է նաեւ բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդը:

Որպես տրանսպորտային միջոց Արթուր Հովհաննիսյանը հայտարարագրել է 2013 թվականի արտադրության Ford մակնիշի մեքենա, որը ձեռք է բերել 2022 թվականին, այն ձեռք է բերվել 4 մլն դրամով:

Արթուր Հովհաննիսյանի կանխիկ դրամական միջոցները կազմել են 1 մլն 450 հազար դրամ, իսկ նախորդ տարվա հայտարարագրում Հովհաննիսյանի հայտարարագրի ֆինանսական դաշտում բացակայում էին կանխիկ դրամական միջոցները:

Պատգամավորի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 10 մլն 056 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմից: Նախորդ տարվա համեմատ ԱԺ ՔՊ խմբակցության քարտուղարի աշխատանքի վարձատրությունն ավելացել է գրեթե 2 մլն 200 հազար դրամով:

Հիշեցնենք, որ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը 2017 թվականին բերման է ենթարկվել ոստիկանություն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով: Ավելին՝անգամ քրեական գործ է հարուցված եղել, որը հետագայում կարճվել է:

Իսկ ինչի՞ մասին է խոսքը. 2017 թվականի նոյեմբերի 28-ին Արթուր Հովհաննիսյանը իր Nissan March մակնիշի ավտոմեքենայով, եւ նրա ուղեւոր, Երեւան քաղաքի Արշակունյաց պողոտայի բնակիչ Գեւորգ Սավթալյանը բերման են ենթարկվել ոստիկանություն, իսկ նրանց մոտ, ըստ Գ. Շամշյանի տեղեկությունների, խուզարկությամբ հայտնաբերվել է 0.24 գրամ կշռով դեղնականաչավուն զանգված: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթը փետրվարի 14-ին դիմել էր ՀՀ ներքին գործերի նախարարության լրատվության վարչություն եւ հարց ուղղել, թե վերոնշյալ գործը ինչ հանգուցալուծում է ստացել, եւ արդյոք մեղադրանք առաջադրված է եղել Արթուր Հովհաննիսյանին, թե ոչ:

Փետրվարի 20-ին Ներքին գործերի նախարարությունից ստացել ենք պատասխան, որում ասվում է. «28.11.2017թ.-ին Ա. Հ.-ին եւ Գ. Ս.-ն ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով բերման են ենթարկվել ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին: 05.12.2017թ. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (Իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը պատժվում է ազատազրկմամբ՝երեքից յոթ տարի ժամկետով): հարուցվել է քրեական գործ, եւ նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ ՔԿ Երեւան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին»:

Այս նույն հարցով դիմեցինք նաեւ Քննչական կոմիտե, որից էլ ստացել ենք հետեւյալ պատասխանը. «Քրեական գործով որեւէ անձ քրեական պատասխանատվության չի ենթարկվել, իսկ իրականացված բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննության արդյունքում 2018 թվականի հունվարի 31-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ կետի՝արարքում հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործով վարույթը կարճելու մասին»: Գերատեսչությունների պատասխաններից անհայտ է մնում, թե ինչու է որոշվել գործը կարճել, սակայն փաստ է մեկ բան, որ նա բերման է ենթարկվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով (իրացում, վաճառք, օգտագործում):

«Ժողովուրդ» օրաթերթը եւս մեկ հարցում է ուղարկել՝փորձելով հասկանալ, թե ինչն է դարձել ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի՝ թմրամիջոցերի ապօրինի շրջանառության գործը կարճելու որոշման հիմքը: Ու մինչ նախաքննական մարմինը կպատասխանի մեր հարցերին, ArmLur.am-ը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանից անձամբ փորձեց հետաքրքրվել, թե ինչ հիմքով կարճվեց գործը, ինչ էր օգտագործել նա կամ միգուցե վաճառել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

Հայաստանի ազգային ժողովի պատգամավորության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը հավանություն տվեց Հայաստանի եւ Հունաստանի միջեւ ռազմատեխնիկական համագործակցության ընդլայնման վերաբերյալ համաձայնագրի վավերացմանը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հունաստանի Հանրապետության կառավարության միջեւ ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին համաձայնագիրն ԱԺ հանձնաժողովի նիստում ներկայացրեց Պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը:

Համաձայնագիրը ստորագրվել է 2023 թվականի դեկտեմբերի 14-ին Աթենքում:

«Համաձայնագրի նպատակն է ընդլայնել եւ խորացնել երկու երկրների միջեւ առկա ռազմատեխնիկական համագործակցության գործընթացը, համաձայնագրով սահմանվում են ռազմատեխնիկական բնագավառում համագործակցության ուղղությունները, անհրաժեշտ մասնագետների եւ տեխնիկական անձնակազմի պատրաստման գործընթացը, ռազմատեխնիկական ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններին աջակցությունը, համագործակցության իրականացման միջոցները»,-ասաց Արման Սարգսյանը:

Ուղղություններ են հանդիսանալու զենքի եւ ռազմամթերքի արտադրության, տեխնոլոգիաների փոխանցումն ու տեխնիկական աջակցությունը, ռազմամթերքի արտադրության, ռազմական հետազոտությունների եւ գնահատման ոլորտներում փորձի փոխանակումը, ռազմական նշանակության ապրանքների արտադրության համատեղ կազմակերպությունների հիմնումը, ռազմատեխնիկական ոլորտում մասնագիտական կրթության, վերապատրաստման եւ որակավորման ծրագրերի իրականացումը, ռազմական նշանակության ապրանքների նորոգման եւ շահագործման հետ կապված ծառայությունների մատուցումը:

Համաձայնագրի դրույթների իրագործման նպատակով կողմերի լիազոր մարմիններ են հանդիսանալու Պաշտպանության նախարարությունները, ստեղծվելու է նաեւ ռազմատեխնիկական համագործակցության համատեղ հանձնաժողով:

Հարակից զեկուցող, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Քրիստինե Պողոսյանը հավելեց, որ այս համաձայնագիրը հնարավորություն է տալիս էլ ավելի ընդլայնված համագործակցություն ունենալ ոչ միայն ռազմական արտադրությունների համատեղ հիմնման, այլ նաեւ զինվորների պատրաստման հարցում:

«Հունաստանը, որպես Հայաստանի բարեկամ, նաեւ հանդիսանում է կամուրջ Հայաստան-ԵՄ եւ Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության»,-հավելեց նա:

Համաձայնագիրը կքննարկվի ԱԺ լիագումար նիստում:

3.000 ԱՄՆ ԴՈԼԱՐ

«ԱԶՆԱՎՈՒՐ» ՏԵՍԱԿԻ ԿՈՆՅԱԿ՝ ԱԶԱՏԵԼՈՒ ԴԻՄԱՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Վահե Սոյանը կաբառֆի միջնորդության դասրվակով ստացել է գույք՝ դրամական միջոց: Այսպես,. Կարինե Պապյանը, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջի միջոցով կապի մեջ գտնվելով իր նախկին աշակերտ, ՀՀ ՊՆ թիվ 51036 զորամասի ժամկետային զինվորական ծառայող Արմեն Միսկարյանի հետ, տեղեկացել է, որ վերջինս բժշկական հետազոտություններ նպատակով 2024 թվականի հունվարի 11-ին տեղափոխվել է Երեւան քաղաքում գտնվող ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ:

Արմեն Միսկարյանի առողջական վիճակի մասին տեղեկություններ պարզելու, նրան ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում պահելու ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկություններ ճշտելու նպատակով Կարինե Պապյանը դիմել է իր ծանոթ Վահե Սոսյանին, ով 2024 թվականի հունվարի 11-ին իր ծանոթ, ինքնությունը դեռեւս չպարզված՝ ոմն Արթուրի հետ գնացել է ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, որտեղ հանդիպել է նույն հոսպիտալի անոթային վիրաբուժության բաժանմունքի պետ Արման Հակոբյանին՝ վերջինիցս հետաքրքրվելով Արմեն Միսկարյանի առողջական վիճակի մասին:

Նույն ժամանակահատվածում Կարինե Պապյանն Արմեն Միսկարյանի խնդրանքով վերջինիս զինվորական հետագա ծառայությունից ազատելու հարցով դիմել է Վահե Սոսյանին՝միաժամանակ տեղեկացնելով, որ հիշյալ հարցը լուծելու դիմաց Արմեն Միսկարյանը եւ նրա մայրը պատրաստ են նաեւ կաշառք տալ:

Տեղեկանալով Արմեն Միսկարյանի եւ Գայանե Մինասարյանի կողմից կաշառք տալու պատրաստակամության մասին եւ նպատակ չունենալով Արմեն Միսկարյանին զինվորական ծառայությունից ազատելու հարցով դիմել որեւէ պաշտոնատար անձի, կաշառքի միջնորդության պատրվակով դրամական միջոց ստանալու դիտավորությամբ, Վահե Սոսյանը Կարինե Պապյանին վստահեցրել է, իբր ունի ծանոթ պաշտոնատար անձինք, որոնց իր միջոցով, 3.000 ԱՄՆ դոլար կաշառք տալու դիմաց հնարավոր է կազմակերպել Արմեն Միսկարյանին հետագա զինվորական ծառայությունից ազատելու հարցը:

Վահե Սոսյանի հիշյալ առաջարկի մասին Կարինե Պապյանը տեղեկացրել է Արմեն Միսկարյանին, ապա պայմանավորվածություններ է ձեռք բերել նրա եւ վերջինիս մոր՝ Գայանե Մինասարյանի հետ՝ Վահե Սոսյանի պահանջած գումարը նրան փոխանցելու շուրջ:

Արմեն Միսկարյանը եւ Գայանե Մինասարյանը, համաձայնվելով Վահե Սոսյանի պահանջած գումարը նրան փոխանցելուն, միաժամանակ, տեղյակ չլինելով նրա իրական մտադրության մասին, 2024 թվականի հունվարի 11-ից մինչեւ փետրվարի 19-ն ընկած ժամանակահատվածում, նախնական համաձայնությամբ, Կարինե Պապյանի եւ Արմեն Միսկարյանի ընկերոջ՝ Գրիգոր Մաղաքյանի միջնորդությամբ, ովքեր եւս տեղյակ չեն եղել

տար անձի, կաշառքի միջնորդության պատրվակով դրամական միջոց ստանալու դիտավորությամբ, Վահե Սոսյանը Կարինե Պապյանին վստահեցրել է, իբր ունի ծանոթ պաշտոնատար անձինք, որոնց իր միջոցով, 3.000 ԱՄՆ դոլար կաշառք տալու դիմաց հնարավոր է կազմակերպել Արմեն Միսկարյանին հետագա զինվորական ծառայությունից ազատելու հարցը:

Վահե Սոսյանի հիշյալ առաջարկի մասին Կարինե Պապյանը տեղեկացրել է Արմեն Միսկարյանին, ապա պայմանավորվածություններ է ձեռք բերել նրա եւ վերջինիս մոր՝ Գայանե Մինասարյանի հետ՝ Վահե Սոսյանի պահանջած գումարը նրան փոխանցելու շուրջ:

Արմեն Միսկարյանը եւ Գայանե Մինասարյանը, համաձայնվելով Վահե Սոսյանի պահանջած գումարը նրան փոխանցելուն, միաժամանակ, տեղյակ չլինելով նրա իրական մտադրության մասին, 2024 թվականի հունվարի 11-ից մինչեւ փետրվարի 19-ն ընկած ժամանակահատվածում, նախնական համաձայնությամբ, Կարինե Պապյանի եւ Արմեն Միսկարյանի ընկերոջ՝ Գրիգոր Մաղաքյանի միջնորդությամբ, ովքեր եւս տեղյակ չեն եղել Վահե Սոսյանի իրական մտադրության մասին, վերջինիս փոխանցել են խոշոր չափի՝ 1.500.000 ՀՀ դրամ եւ 90.000 ՀՀ դրամ արժողությամբ «Ազնավուր» տեսակի կոնյակ: Մասնավորապես, Արմեն Միսկարյանը եւ Գայանե Մինասարյանը հիշյալ գումարի մի մասը Կարինե Պապյանին փոխանցել են Գրիգոր Մաղաքյանի միջոցով՝ առձեռն, իսկ մյուս մասը՝նրա հաշվին փոխանցելու եղանակով:

Արմեն Միսկարյանից եւ Գայանե Մինասարյանից ինչպես իր հաշվին փոխանցման եղանակով, այնպես էլ Գրիգոր Մաղաքյանի միջոցով հիշյալ գումարը ստանալուց հետո Կարինե Պապյանը, իր հերթին, 2024 թվականի հունվար-փետրվարին, քննությամբ չպարզված օրերին, իր բնակության վայրի մոտակայքում՝ Երեւանի Աճառյան փողոցի 1 հասցեի մոտ գտնվող վերգետնյա հետիոտնային անցումի մոտ, ընդհանուր երեք դեպքում, Վահե Սոսյանին փոխանցել է 1.400.000 ՀՀ դրամ, իսկ գումարի մնացած մասից 90.000 ՀՀ դրամով Վահե Սոսյանի խնդրանքով կատարել է գնումներ, ինպես նաեւ 10.000 ՀՀ դրամ փոխանցել է վերջինիս նշած բանկային հաշվեհամարին: Վերոգրյալից բացի, Վահե Սոսյանի պահանջով Կարինե Պապյանն Արմեն Միսկարյանից եւ Գայանե Մինասարյանից վերցված գումարի մնացած մասով՝ 90.000 ՀՀ դրամով, ձեռք է բերել «Ազնավուր» տեսակի կոնյակ, որը փոխանցել է Վահե Սոսյանին:

Այսպիսով, նպատակ չունենալով Արմեն Միսկարյանին զինվորական ծառայությունից ազատելու հարցով դիմել որեւէ պաշտոնատար անձի, կաշառքի միջնորդության պատրվակով դրամական միջոց ստանալու դիտավորությամբ, Վահե Սոսյանը Կարինե Պապյանի միջնորդությամբ Արմեն Միսկարյանից ու Գայանե Մինասարյանից ստացել է ընդհանուր առմամբ 1.500.000 ՀՀ դրամ եւ 90.000 ՀՀ դրամ արժողությամբ «Ազնավուր» տեսակի կոնյակ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

36 ԿԳ ՈՍԿՈՒՑ 24 ԿԳ-Ն ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Երեւան-Երասխ ավտոճանապարհին 36 կգ ոսկյա ձուլակտորների գործով կալանավորվածներից որեւէ մեկը ցուցմունք չի տալիս: Ավելին մեզ հասած տեղեկությունների համաձայն անհետացած 36 կգ ոսկուց 24 կգ-ը հայտնաբերվել է, իրավապահները ման են գալիս մնացած ոսկին եւ գումարները:

Ավելին ,մեզ հասած լուրերի գործով կալանավորված է բուն կատարողներից մեկը , որը կապանի բնակիչ է եւ հրաժարվում է ցուցմունք տալ, իսկ գողություն կատարած մյուս 3 հիմնական դերակատարների դեռ փնտրում են :Ի դեպ մեզ հայտնի դարձավ, որ գործով կալանավորված են նաեւ երեք եղբայրներ: Նկատենք, որ գործով կալանավորվածների կալանքի ժամկետը մոտենումէավարտի եւ նախաքննական մարմինը մեկը մյուսի հետեւից միջնորդություններ է ներկայացնում դատարան կալանքը երկարացնելու մասով:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ ապրիլի 10-ին «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով հետապնդել են «Հունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենային, եւ ժամը 07:15-ից մինչեւ 07:20-ն ընկած ժամանակահատվածում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մայրաքաղաքային փողոցի դիմաց արհեստական խոչընդոտ ստեղծելով՝ մեքենայի դիմացի աջ դռան պատուհանից զենքի գործադրման սպառնալիքով կանգնեցրել են նշված ավտոմեքենան: Կանգնեցնելուց հետո ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք, ԱԱԾ աշխատակիցների համազգեստին նմանվող համազգեստով եւ դիմակավորված, դուրս գալով ավտոմեքենայից՝ներկայացել են իբրեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ, եւ ավտոմեքենայում գտնվող 3 անձի նկատմամբ զենքի կիրառմամբ բռնություն գործադրելով՝ նրանց դուրս են բերել ավտոմեքենայից, թմրամիջոց ու այլ արգելված իրեր փնտրելու եւ նրանց ձերբակալելու պատրվակով ձեռքերին անցկացրել են ձեռնաշղթաներ, ապա ավտոմեքենայից հափշտակելով առանձնապես խոշոր չափի՝ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորները եւ 293.000.000 ՌՈՒ ռուբլի գումարի պարունակությամբ պայուսակները, հիշյալ անձանց նկատմամբ բռնություն գործադրելով, նստեցրել են նույն ավտոմեքենան, դիմացի դռնից արցունքաբեր գազ փչելով ավտոմեքենայի մեջ՝«Պորշ» մակնիշի ավտոմեքենայով դիմել են փախուստի:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 12 անձի նկատմամբ, որոնցից 5-ի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, 3-ի նկատմամբ՝ այլ խափանման միջոցներ, 4 անձի ձերբակալելու որոշում է կայացվել եւ ոստիկանությանը տրվել է նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու հանձնարարություն:

Ի դեպ, գրել էինք, որ քրեական վարույթով իրավապահների տեսադաշտում է հայտնվել նաեւ «օրենքով գողի» փեսան», ինչպես նաեւ դատավորի սանիկ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ

ԳԱԶԱԼՑԱԿԱՅԱՆ Է ՊԱՅԹԵԼ

Հունիսի 6-ին՝ ժամը 23:14-ին, ՆԳՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն, Կոտայքի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ստացվել են բազմաթիվ ահազանգեր, նաեւ աշխատել է «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» հակահրդեհային ազդարարման համակարգը. Երեւան-Սեւան ճանապարհին գտնվող գազալցակայանում տեղի էր ունեցել պայթյուն, բռնկվել էր հրդեհ:

Հրդեհի բարդությունից ելնելով՝ տեղում հայտարարվել է հրդեհի «Թիվ 3» կանչ:

Հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավվել են 13 մարտական հաշվարկ, 4 օպերատիվ խումբ, 1 փրկարարական ջոկատ եւ համայնքային 12 ջրատար, որոնցից 5-ը՝Երեւանի քաղաքապետարանից, 3-ը՝Աբովյան համայնքից, 1-ական՝Նոր Հաճն եւ Ակունք համայնքներից, եւ Բալահովիտ համայնքի բնակչի 2 ջրատար:

Ըստ նախնական տվյալների՝Երեւան-Սեւան մայրուղու 6/1 հասցեում գտնվող «Գազօիլ» ՍՊԸ-ի գազաբենզալցակայանում տեղի է ունեցել հեղուկ գազի ցիստեռնի (37 տ) պայթյուն՝հրդեհի բռնկումով:

Գազալցակայանի տարածքում տեղի է ունեցել 3 հեղուկ գազի (յուրաքանչյուրը՝ 37 տ), 1 դիզելի (8 տ) եւ 1 բենզինի (12 տ) ցիստեռներից արտահոսք՝հրդեհի բռնկումով:

Այրվել են «Mercedes» եւ «Opel» մակնիշի ավտոմեքենաներն ամբողջությամբ, կցորդիչով բեռնատարի վարորդի խցիկը՝ ամբողջությամբ, «Zil» մակնիշի բեռնատարի ցիստեռնը, մեկ այլ գազի ավտոցիստեռնի վարորդի խցիկը՝ ամբողջությամբ, ջերմահարվել է «BMW» մակնիշի ավտոմեքենայի ձախակողմյան հատվածը:

Այրվել են լցակայանի տանիքի կառուցատարրերը (մոտ 120 քառ/մ), պատուհաններն ու դռները, վնասվել են մոտակայքում գտնվող սառնարանները, այրվել է վարչական շենքի տանիքը (մոտ 150 քառ/մ), վնասվել է գույքը, հարակից շինանյութի պահեստի հետնամասում գտնվող տարածքում այրվել են մոտ 40 քառ/մ կուտակված թափոններ:

Պայթյունի եւ հրդեհի հետեւանքով տուժել է 7 քաղաքացի, որոնցից 1-ը «Աբովյան» ԲԿ-ում ստանալով համապատասխան բուժօգնություն՝ դուրս է գրվել, իսկ 6-ը գտնվում են «Այվածքաբանության եւ մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ում:

Հունիսի 7-ի ժամը 8.51-ի դրությամբ բոլոր ռեզերվուարներից դադարեցվել է արտահոսքը:

Տեղում հերթապահում է Փրկարար ծառայության երեք մարտական հաշվարկ՝ պարբերաբար իրականացնելով հովացման եւ սառեցման աշխատանքներ:

Ժամը 10.00-ի դրությամբ Երեւան-Սեւան ավտոճանապարհի երթեւեկությունն ամբողջությամբ վերականգնվել է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունիսի 6-ից 7-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 74 դեպք, որից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԱՐԱՐԱԾ ԱՂՍՏԵՎԸ ԱՎԵՐԵԼ Է ԴԵՆԴՐՈՊԱՐԿԻ ՋՐԱՌԸ

Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւի հունում ապօրինի շինարարության հետեւանքով ավելի քան երեք տարի առաջ Իջեւանի դենդրոպարկի ջրառը զրկվեց Աղստեւի ջրից, չորացան շուրջ 1500 հազվագյուտ ,արժեքավոր ծառեր, թփեր եւ մոտ 24 հազար տնկի: Աղստեւի մաս հանդիսացող ջրային հողն առանց ՀՀ ջրային կոմիտեի եզրակացության վարձակալությամբ Իջեւանի գինու, կոնյակի գործարանին հանձնելու եւ գործարանի կողմից ապօրինի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է նախաձեռնվել: Իջեւանի դենդրոպարկի նախկին տնօրեն Մեխակ Սայադյանը հայտնեց, որ Քննչական կոմիտեի կարեւորագույն գործերով զբաղվող վարչությունում այդ գործով փոխվել է երեք քննիչ, սակայն գործով մեղադրյալ չկա: Իջեւանի գինու, կոնյակի գործարանն առանց շինթույլտվության հենապատ կառուցելու համար 2021թ. մարտի 29-ին տուգանվել է 200 հազար դրամի չափով: Գործարանը շարունակել է կառուցապատումը եւ 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով: Սակայն Իջեւանի գինու, կոնյակի գործարանը «պարգեւատրվել է», վարձակալությամբ դենդրոպարկից ստանալով 5,7 հեկտար տարածք՝ այն հանգստի գոտի դարձնելու նպատակով: Մ. Սայադյանը հայտնեց, որ 2023 թ աշնանը Իջեւանի գինու, կոնյակի գործարանի տերերը գետի հունը փորելուց եւ մինչեւ 2,5 մ իջեցնելուց հետո կառուցել են լրացուցիչ ջրհավաք առու՝ գետից հանված քարով եւ ցեմենտբետոնով,այդ ժամանակ դենդրոպարկ է ժամանել Շրջակա միջավայրի փոխնախարար Մեյմարյանը: Մ. Սայադյանը փոխնախարար Մեյմարյանին զգուշացրել է, որ գետի հունը Իջեւանի գինու գործարանի տերերի կողմից նեղացվել է 15 մետրով եւ կառուցվել է մեծ պատ՝ գետի մեջտեղում, ջրի հոսքի ուժը մեծացել է մի քանի անգամ, կառուցված ջրառը փլուզվելու է, մանավանդ, որ այն կառուցվել է առանց հիմքի: 2024թ մայիսի 26-ին Աղստեւի վարարման հետեւանքով դենդրոպարկի ջրառը քանդվել, քշվել է: Մ. Սայադյանն ասաց, որ դենդրոպարկի 4 աշխատողների հաստիքները կրճատել են, իրենց աճեցրած մոտ 50 միլիոն դրամ արժողությամբ տնկանյութը հանձնել են գինու գործարանին, այժմ այդ տնկայնութը չկա: Նրա վկայությամբ՝ Իջեւանի գինու գործարանին հանձնված 5,7 հա տարածքից մնացել է 5 հա-ից պակաս տարածք, մնացածը գետ քշել է: Մ. Սայադյանն ասաց, որ դենդրոպարկի հարուստ կոլեկցիան ՀՀ-ում ճանաչում է միայն ինքը, իսկ Մ. Սայադյանը որպես շահագրգիռ կողմ իրավունք չունի մասնակցելու դենդրոապարկի կրած վնասների գնահատման աշխատանքներին, անհրաժեշտ կլինի արտերկրից հրավիրել 60-70 դենդրոլոգ, ինչը կարժենա 30-35 միլիոն դոլար: Նրա գնահատականով՝ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից դենդրոպարկին պատճառվել է մոտ 6 միլիոն դոլարի վնաս:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն այսօր հանդիպել է ԵԽ գրասենյակի ներկայացուցիչների հետ:

ԵԽ ժողովրդավարության եւ մարդկային արժանապատվության գլխավոր տնօրինության խտրականության դեմ պայքարի բաժնի ղեկավար Անգելա Լոնգոյի հետ հանդիպմանը քննարկվել են կրթական համակարգում հավասար հնարավորությունների ապահովմանն ու ներառական կրթության համակարգին առնչվող հարցեր:

Արաքսիա Սվաջյանը, ողջունելով հյուրերին, ընդգծել է՝ նախարարությունը որդեգրել է համընդհանուր ներառականության քաղաքականություն, եւ խտրականության դեմ պայքարի հարցերն առաջնային ուշադրության կենտրոնում են: Այս համատեքստում Արաքսիա Սվաջյանը համատեղ ծրագրերի իրականացման եւ համագործակցությունը խորացնելու պատրաստակամություն է հայտնել:

Նախարարի տեղակալի խոսքով՝ ՀՀ կրթական համակարգում մինչեւ 2030 թվականը ռազմավարական մի քանի ուղղություններ են նախանշվել, այդ թվում՝ համընդհանուր, ներառական, ուսանողակենտրոն եւ մասնակցային կրթական միջավայրի ստեղծում եւ կրթության արդյունավետության բարձրացում:

ԵԽ ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել ընդունելության համար՝ ընդգծելով, որ Հայաստանը Եվրոպայի խորհրդի կարեւոր գործընկերներից է, եւ կրթության ոլորտում համագործակցությունը ԵԽ-ի առաջնահերթություններից է: Քննարկման ընթացքում որպես համագործակցության կարեւոր ուղղություն անդրադարձ է կատարվել նաեւ ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանության խնդրին:

ԿԳՄՍ նախարարի տեղակալի խոսքով՝ ազգային փոքրամասնությունների կրթության, մշակույթի, ինքնության, լեզվի եւ իրավունքների պահպանությունը ՀՀ-ում պետական առաջնահերթություն է:

Մասնավորապես՝ ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի կարեւոր բաղադրիչներից է նախադպրոցական կրթության ապահովումը, իսկ առաջնահերթ նպատակներից մեկը ազգային փոքրամասնությունների դպրոցներում եւ համայնքներում նախադպրոցական հաստատությունների հիմնումն է: Նախադպրոցական կրթության կազմակերպումը կնպաստի վաղ տարիքից երեխաների ներգրավմանը կրթական գործընթացներում: Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացման եւ աշխատավարձերի բարձրացման խրախուսման ծրագրերի համատեքստում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը տեղեկացրել է, որ կամավոր ատեստավորմանը մասնակցում են նաեւ ազգային փոքրամասնությունների լեզուների՝ ասորերեն, եզդիերեն, քրդերեն դասավանդող ուսուցիչները եւ խմբակավարները: Դպրոցներում էլ ապահովված են անհրաժեշտ բոլոր պայմանները լեզվի ուսուցման սահուն կազմակերպման նպատակով: ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների երեխաներին դասագրքերը պետության կողմից տրամադրվում են անվճար:

Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են նաեւ ուսուցիչների շրջանում ատելության խոսքի հետ կապված իրազեկության բարձրացումը եւ այս ուղղությամբ վերապատրաստումների իրականացումը:

Ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված ծրագրերում Արաքսիա Սվաջյանը կարեւորել է Կրթության զարգացման եւ նորարարության ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) եւ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հետ սերտ համագործակցությունը:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրության ներկայացնող այլ հարցեր՝ պատրաստակամություն հայտնելով մեկտեղելու ջանքերը հավասարության եւ բազմազանության հանրային ըմբռնման բարձրացման ուղղությամբ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ եւ Եվրոպական հանձնաժողովի միջեւ կնքվել է «Հայաստանում ԵՄ աջակցությունը կրթությանը» ֆինանսավորման համաձայնագիրը, որով Եվրոպական միությունը Հայաստանին կտրամադրի դրամաշնորհային հիմունքներով բյուջետային աջակցություն:

2023թ. սեպտեմբերի 12-ին ուժի մեջ մտած համաձայնագիրն ուղղված է Հայաստանի կրթական համակարգի մրցունակության բարձրացմանը՝ 2021-2026 թթ. Կառավարության ծրագրով սահմանված կրթական բարեփոխումներին, մասնավորապես՝ ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրին եւ դրանից բխող գործողությունների ծրագրի իրագործմանը: Եվրոպական հանձնաժողովի կողմից 2023թ. Դեկտեմբերին ՀՀ կառավարությանն է փոխանցվել 5 մլն եվրո, իսկ 2024 թ. մայիսին՝ 1.5 մլն եվրո:

«Հայաստանում ԵՄ աջակցությունը կրթությանը» համաձայնագրով նախատեսվում է ՀՀ Արարատի, Կոտայքի ու Գեղարքունիքի մարզերի բոլոր 330 դպրոցներում վերանորոգված եւ կահավորված ԲՏՃՄ լաբորատորիաների ստեղծում, ինչպես նաեւ ուսուցիչների վերապատրաստում՝ ժամանակակից մեթոդաբանությամբ:

Նախատեսվում է նաեւ Սյունիքի մարզում 13 կրթահամալիրների կառուցում, որոնցից 7-ը՝ Կապանում, իսկ 6-ը՝ Գորիսում: Սյունիքի մարզի 13 դպրոց-կրթահամալիրների նախագծանախահաշվային փաստաթղթերը հաստատված են, որոշ դպրոցների շինարարական աշխատանքներն արդեն մեկնարկել են:

Դպրոցների կառուցման, վերանորոգման, լաբորատորիաների ստեղծման բաղադրիչից բացի՝ ծրագիրը ներառում է աշակերտների ուսումնառության արդյունքների գնահատման ազգային համակարգի բարելավման ուղղությամբ աջակցություն:

Լրացուցիչ տեխնիկական աջակցություն է տրվելու ԿԳՄՍ նախարարությանը՝ ապահովելու բոլոր մակարդակներում ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրի արդյունավետ իրականացումը:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 1 մարդ զոհվել է, 27-ը՝ տացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

Ֆիզիկական անձինք անշարժ գույքը վարձակալության հանձնելու դեպքում հաշվետու տարվա համար պետք է վճարեն վարձակալությունից հաշվարկված եկամտային հարկ եւ ներկայացնեն տարեկան հաշվարկ-հայտարարագիր: Այս մասին հայտնում են ՊԵԿ-ից:

Հարկային տարվա ընթացքում ստացված, այդ թվում՝ հարկային գործակալներից ստացված վարձակալական վճարների հանրագումարը 60 մլն դրամը գերազանցելու դեպքում հաշվարկ-հայտարարագրի երրորդ բաժնում՝ «Վարձավճարի 60 մլն դրամը գերազանցող գումար» դաշտում պետք է լրացնել վարձակալական վճարների հանրագումարի 60 մլն դրամը գերազանցող մասի գումարը, որի համար եկամտային հարկը եւս հաշվարկում է ինքնաշխատ:

2023 թվականի համար հաշվարկ-հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետը հուլիսի 22-ն է:

ԲԱՆԿԸ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԿԱՏԱՐԻ

Թուրքիայում Համաշխարհային բանկի գրասենյակի տնօրեն Ումբերտո Լոպեսը հայտնել է, որ բացի Թուրքիայում գործող բոլոր հիմնադրամներին արդեն տրամադրված ֆինանսավորումից (17 միլիարդ դոլար), Համաշխարհային բանկը Թուրքիայում եւս 18 միլիարդ դոլար կներդնի, հայտնել է erշenihaber-ը:

Լոպեսը պարզաբանել է, որ դրանք ներդրվելու են ոլորտներում, որոնք կկարողանան բարձրացնել երկրի տնտեսական արդյունավետությունը:

ԿԿԱՌՈՒՑՎԻ ԱԳՐՈՔԱՂԱՔ

Բելառուսն օկուպացված Արցախի տարածքում կկառուցի ագրոքաղաք. այդ մասին հայտնել է հանրապետության փոխվարչապետ Իգոր Պետրիշենկոն Առեւտրատնտեսական համագործակցության բելառուսա-ադրբեջանական միջկառավարական հանձնաժողովի նիստի ժամանակ:

Նա ընդգծել է, որ Բելառուսն իր կոնկրետ ներդրումն է ունենալու «Ղարաբաղի վերածննդի գործում»:

«Մեր հիմնական ծրագրերից մեկը կլինի Աղդամի (Ակնա) տարածաշրջանում ինտեգրված ժամանակակից գյուղատնտեսական քաղաքի ստեղծումը, ներառյալ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունն ու վերամշակումը, ինչպես նաեւ աշխատողների եւ նրանց ընտանիքների անդամների բնակարանային եւ սոցիալական հարմարությունները: Մենք նախատեսում ենք այդ համապարփակ նախագծի հայեցակարգը ներկայացնել պետությունների ղեկավարներին»,- հավելել է Պետրիշենկոն:

ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐ

ՈՐՔԱՆ ԱՐԺԵ ՀԱՆԳԻՍՏԸ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

Ամառային հանգստի մեկնարկն արդեն տրված է: Արձակուրդային այս սեզոնին Հայաստանում մի քանի ցանկալի եւ գրավիչ առաջարկներով ուղղություններ կան, դրանցից են օրինակ՝ Դիլիջանը, Ծաղկաձորը, Սեւանը կամ Ջերմուկը եւ Գյումրին եւ նաեւ այլ առողջարանային ուղղություններ:

Ըստ այցելուների թվի՝ Դիլիջանը թերեւս ամենացանկալի ուղղությունն է տարվա յուրաքանչյուր եղանակի:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել եւ առանձնացրել է ինչպիսի գնային սանդղակ է գործում Դիլիջանի հանգստյան գոտիներում ըստ Booking.com-ի:

Այսպիսով, Դիլիջանում 7 օր 6 գիշեր հանգստի համար հանգստյան գոտիների արժեքը սկսվում է 90 հազար դրամից եւ հատում 600 հազար դրամի սահմանը:

Rossi Rest House By The River-ը բնակարան է Դիլիջանում: Պատուհաններից բացվում է տեսարան դեպի սարերը: Հյուրերին հասանելի է ռեստորան, ընդհանուր խոհանոց, բար, այգի, պատշգամբ եւ խորովածի հարմարանքներ: Անվճար Wi-Fi-ը հասանելի է ողջ գույքով: Առկա է նաեւ անհատական կայանատեղի:

6 գիշեր այստեղ անցկացնելն արժի 52 հազար դրամ:

Kirovi Tun-ը հյուրանոց է, որը գտնվում է Դիլիջանում: Այն ունի այգի, ընդհանուր լաունջ, պատշգամբ եւ ռեստորան: Յուրաքանչյուր սենյակ ունի անհատականլոգարան եւ հարթ էկրանով հեռուստացույց կաբելային ալիքներով: Հյուրերը կարող են օգտվել 24-ժամյա ընդունարանից, օգտվել օդանավակայանի տրանսֆերներից կամ սննդի առաքման ծառայությունից եւ օգտվել անվճար Wi-Fi-ից ամբողջ հյուրանոցում:

Հյուրանոցում 7 օր 6 գիշեր անցկացնելն արժի 172 հազար դրամ:

Guest house Dilijan Orran-ը հյուրատուն է, որը գտնվում է Դիլիջան քաղաքում: Ունի այգի եւ խորովածի հարմարանքներ: Մյուս հարմարությունները ներառում են ընդհանուր խոհանոց եւ սննդի սպասարկում: Հյուրատունն ունի պատշգամբ, ռեստորան եւ խորտկարան: Պատուհաններից բացվում է տեսարան դեպի քաղաք:

Այստեղ 6 գիշեր անցկացնելու համար անհրաժեշտ կլինի վճարել 200 հազար դրամ:

Թանկարժեք հյուրանոցներում աստիճանաբար մեկ գիշերի արժեքն ավելի է թանկանում: Օրինակ 5 աստղանի հյուրանոցում 6 գիշեր անցկացնելու արժեքը կարող է կազմել 500 հազարից մինչեւ 1 միլիոն եւ ավելի:

Dili Town Resort and Spa-ն բնակարան-հյուրանոց է Դիլիջանում: Այն ունի այգու պատշգամբ եւ տեսարան դեպի քաղաք, ինչպես նաեւ անվճար Wi-Fi: Այն ունի սաունա եւ տաք լոգարան: Կայքում առկա է մասնավոր ավտոկայանատեղի:

Յուրաքանչյուր բնակարան ունի օդորակիչ եւ հարթ էկրանով հեռուստացույց արբանյակային ալիքներով: Առանձին լոգասենյակը հագեցած է ցնցուղով, անվճար լոգանքի պարագաներով, վարսահարդարիչով եւ հողաթափերով:

Այստեղ 1 շաբաթ անցկացնելն արժի 1 մլն 350 հազար դրամ:

Best Western Plus Paradise Dilijan հյուրանոցը գտնվում է գեղատեսիլ տարածքում, Հայաստանի եւ Վրաստանի քաղաքները միացնող M4 մայրուղուց 5 րոպե հեռավորության վրա: Այն առաջարկում է անվճար Wi-Fi եւ անվճար մասնավոր ավտոկայանատեղի:

Լավ լուսավորված սենյակները հագեցած են հեռուստացույցով, սառնարանով, պատշգամբով եւ մասնավոր բաղնիքով՝ անվճար հիգիենիկ պարագաներով: Այս հյուրանոցում մեկ շաբաթ անցկացնել արժի 400 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

Այս տարի Հայաստանում Yandex ծրագրավորման դպրոցի դասընթացները հաջողությամբ ավարտել է 59 աշակերտ: Ծրագիրն իրականացվում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (ՁԻՀ) Վանաձորի եւ Գյումրու տեխնոլոգիական կենտրոններում 2017 թվականից՝ ՁԻՀ-ի եւ Yandex:Go-ի հետ սերտ համագործակցությամբ: Ընդհանուր առմամբ, Հայաստանում դպրոցի գործունեության ընթացքում ուսանել է ավելի քան 400 աշակերտ:

«Յոթ տարում մեր ծրագիրը եւ գործընկերները ցույց են տվել, որ կարող են դպրոցականներին ապահովել որակյալ կրթությամբ, օգնել նրանց իրացնելու իրենց կարողություններն ու տաղանդը, ինչպես նաեւ հիմք ստեղծել SS ոլորտ նրանց մուտքի եւ զարգացման համար՝ որպես հեռանկարային եւ որակավորված մասնագետներ: Մենք ուրախ ենք լինել ՁԻՀ-ի գործընկերն այս յոթ տարիների ընթացքում: Այս հարթակի աշակերտները լավ առաջադիմություն եւ սովորելու նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերում: Եվ այսպես, յոթ տարվա աշխատանքի ընթացքում ուսանողների՝ ուսումը դադարեցնելու ընդհանուր տոկոսը երբեք չի գերազանցել 30%-ը, ինչը վկայում է դպրոցականների բարձր մոտիվացիայի եւ ուսուցիչների որակավորման մասին:

Եվ այսօր մենք հավաքվել ենք՝ շնորհավորելու այն երեխաներին, որոնք հաջողությամբ ավարտեցին ծրագիրը»,- ասում է Հայաստանում YandexGo-ի տնօրեն Բագրատ Եղիազարյանը: Ծրագրավորման դպրոցը Yandex-ի անվճար կրթական նախագիծն է ավագ դպրոցի աշակերտների համար, որոնք հետաքրքրված են ծրագրավորմամբ եւ ճշգրիտ գիտություններով: Հայաստանում նախագիծն իրականացվում է YandexGo-ի աջակցությամբ: Շրջանավարտները մասնակցում են միջազգային մեծ հեքըթոնների եւ օլիմպիադաների, որոնք անցկացնում են այնպիսի SS ընկերություններ, ինչպիսիք են Google-ը, Facebook-ը եւ Huawei-ը, հաջողությամբ մասնակցում են WorldSkillsJuniors-ին, ընդունվում են մասնագիտացված համալսարաններ, այդ թվում՝ արտասահմանյան:

«ՄԻՐ» ՔԱՐՏԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Ռուսաստանն աշխատում է Հայաստանում եւ Ղրղզստանում «Միր» խաղաքարտերի գործարկումը վերսկսելու ուղղությամբ, նրանք գտնվում են Արեւմուտքի սարսափելի, ծանր ճնշման տակ: Այս մասին հայտարարել է ՌԴ փոխարտգործնախարար Ալեքսանդր Պանկինը Սանկտ Պետերբուրգի միջազգային տնտեսական համաժողովի (SPIEF) շրջանակներում:

ՌԴ ԱԳՆ ղեկավարի տեղակալի խոսքով՝ արեւմտյան երկրները «փորձում են տարբեր թույլ կետեր գտնել աշխարհի հետ իրենց փոխգործակցության մեջ»: «Դրա համար նրանք կանգնում են այս ցավոտ տեղին: Մենք կտեսնենք, մենք դեռ հույս ունենք լավագույնի», - ՏԱՍՍ-ին ասել է Պանկինը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

«ՉԱՐԵՆՑՅԱՆ ԱՄԱՌ» ԾՐԱԳԻՐ

Դպրոցականների ամառային հանգիստը կրթամշակութային-հետազոտական ժամանցով հարստացնելու, դասանի տարիից դեպի հետազոտությունը հետաքրքրություն առաջացնելու, աշակերտ-ուսուցիչ-ամառ-ընթերցանություն-գրականություն-գիտություն-թանգարան կապն ամրապնդելու նպատակով Եղիշե Չարենցի տուն-թանգարանը, համագործակցելով Հայաստանի գրողների միության հետ, մեկնարկում է «Չարենցյան ամառ» կրթամշակութային ծրագիրը:

Ծրագիրը, որի կարեւորագույն խնդիրներից է բացահայտել Չարենցի կերպարը, նրա «օգնությամբ» ծանոթանալ ժամանակի մյուս մեծերի կյանքի հայտնի եւ անհայտ դրվագներին, ստեղծագործական ժառանգությանը, նախատեսված է 14-17 տարեկան դպրոցականների համար:

Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Ժաննա Մանուկյանը հունիսի 7-ին լրագրողների հետ հանդիպմանն ասաց՝ ծրագրի մեկնարկն այլ ձեւաչափով տրվել է նախորդ տարի, բայց, հաշվի առնելով դրական արձագանքները, լրամշակված տարբերակով իրականացնում են նաեւ 2024-ին եւ հույս ունեն, որ այն շարունակական կլինի:

«Այս նախագծի նպատակն է ամառային հանգիստն ապահովել կրթական ժամանցով եւ հետաքրքրություն առաջացնել հետազոտական, կրթական, գիտական աշխատանքի հանդեպ, ինչու չէ՝ աջակցել դպրոցականներին մասնագիտական կրթության հարցում: Ընտրել ենք 14-17 տարեկան դպրոցականներին, քանի որ նրանք կանգնած են մասնագիտական կրթության ընտրության առաջ, իսկ ծրագիրը կարող է նրանց օգնել»,-ասաց Մանուկյանը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի խոսքով՝ նախարարության ռազմավարության գլխավոր նպատակներից եւ ուղղություններից մեկը կրթությունն է: «Մենք ամեն կերպ ձգտում ենք ամրացնել կրթական բաղադրիչը, կրթական ծրագրերը թանգարաններում: Այդ նպատակով ենք վերանայել դպրոցական բաժանորդային համակարգը, որն այսուհետ մոտեցված է դպրոցական կրթական ծրագրերին, ստեղծել ենք Մշակույթի զարգացման հիմնադրամ, որը միտված է թեթեւացնել, բեռնաթափել թանգարանների այլ գործառույթները, որ թանգարանները կարողանան ավելի շատ կենտրոնանալ գիտական ու կրթական նախաձեռնությունների վրա»,-շեշտեց Քոչարյանը:

Անդրադառնալով «Չարենցյան ամառ» ծրագրին՝ նա ասաց՝ այն դպրոցականներին հնարավորություն է տալիս կյանքը հարստացնել մշակութային ժամանցով, բացահայտել Չարենցի կերպարը, նրա օգնությամբ այլ մեծերի կյանքի հայտնի եւ անհայտ դրվագներն ու ստեղծագործական ժառանգությունը: Փոխնախարարը բոլոր ուսուցիչներին հորդորեց մասնակցել ծրագրին եւ իրազեկել աշակերտներին:

Գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը շատ է կարեւորում ընթերցանության նշանակությունը յուրաքանչյուրի կյանքում: «Ընթերցելը եւ՛ գիտելիք է, եւ՛ հոգու զարգացման հնարավորություն: Չարենցին կարդալով՝ հանգում ենք մի գաղափարի՝ կարդալ նշանակում է ստեղծագործել, իսկ պատանիներին անհրաժեշտ է հենց այդ ուղղությամբ կրթել: Պետք է ընտրողաբար մոտենալ ընթերցանությանը, կարդալ գրքեր, որոնք բարձրացնում են մեզ: Չարենց ընթերցելով, նրա փորձը ուսումնասիրելով պետք է կարողանանք տարածել ստեղծագործելու գաղափարը: Չարենցը 14 տարեկանից Կարսի այգում նստած կարդում էր աշխարհի մեծերին, ռուսական ռեալական դպրոցում սովորելիս ծանոթացել է ռուսական սիմվոլիզմին: Այդ ամենը նրան մշակութային, գրական կուլտուրա են փոխանցել: Առանց այդ ամենը կարդալու նա չէր կարող ստեղծել «Ծիածան» շարքը, այլ գործեր, հետագայում՝ հայ դասական եւ համաշխարհային գրականության լավագույն նմուշները»,-շեշտեց Միլիտոնյանը:

Ըստ նրա՝ այն, ինչ կարդում ես, ճյուղավորումներ է տալիս, որոնք անհատին ակտիվ ընթերցող են դարձնում: Միլիտոնյանը կարծում է՝ կրթական ծրագիրը պետք է նպաստի հենց այդ գաղափարին:

«Չարենցյան ամառ» ծրագիրը բաղկացած է երեք փուլից՝ հետազոտական աշխատանք, գիտաժողով, նյութերի ժողովածուի հրատարակում: Գրական-մշակութային վերոնշյալ երկու կառույցների կողմից հաստատված հանձնաժողովը յուրաքանչյուր տարի ամռանը հայտարարելու է հետազոտական աշխատանքի խորագիրը, որի շրջանակում գրականասեր-չարենցասեր պատանիներն ուսուցիչների խորհրդատվությամբ կուսումնասիրեն Եղիշե Չարենցի կյանքն ու ստեղծագործությունը, բանաստեղծի միջանձնային, ստեղծագործական կապերը ժամանակի գրողների, արվեստագետների (հայ կամ օտարազգի) հետ:

«ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ 100»

ՀԱՄԵՐԳ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀՈՒՄ

Հաշվի առնելով, որ 2024 թվականին ամբողջ աշխարհում նշվում է մեծն շանսոնյե Շառլ Ազնավուրի 100-ամյա հոբելյանը, «Նյու Ջեներեյշն փրոջեքթը» անմասն չմնալով մի շարք համերգային նախագծերից հունիսի 8-ին նախաձեռնել է հոբելյանական համերգ՝ ի պատիվ համաշխարհային հայի:

Համերգի շրջանակներում «Նյու Ջեներեյշն փրոջեքթը» Հայաստան է հրավիրել Ազնավուրի երգերի հայտնի եւ անհավանական նմանությամբ կատարող Ղասսան Յամմինին, ով ելույթ կունենա Հայաստանի Հանրապետության հանրային ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ, դիրիժոր՝ նվագախմբի գեղարվեստական ղեկավար, ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Երզնկյան. Համերգը տեղի կունենա Արամ Խաչատրյան համերգասրահում: Ղասսան Յամմինը Եվրոպայում հաճախ է տարբեր նվագախմբերի հետ հանդես եկել, տարիներ շարունակ կատարել է Ազնավուրի երգերը աշխարհի մի շարք բեմերում, սակայն առաջին անգամ Հայաստանում հանդես եկավ վերջերս՝ 2023 թվականի դեկտեմբերի 29-ին: Նա կարծում է՝ Ազնավուրի երգերը հենց Հայաստանում պետք է կատարվի: Մաեստրո Երզնկյանը իր խոսքում նշեց, որ համերգին մասնակցելու առաջարկը մեծ սիրով է ընդունել: Շմավոն Գրիգորյանի խոսքով հունիսի 8-ին կայանալիք համերգից հետո հաջորդ համերգը նախատեսված է հուլիսի 19-ին. առաջին անգամ Հայաստանում ելույթ կունենա Queen Sensation՝ խումբը, իսկ օգոստոսի 9-ին բացառիկ «Վիվալդի DJ» խորագրով համերգը կներկայացվի, որը իր տեսակով բացառիկ է եւ առաջին անգամ է նման ծրագիր ներկայացվում Հայաստանում: Մաեստրո Երզնկյանի հետ համագործակցությունը լինելիս է շարունակական. հետաքրքիր համերգային նախագիծ է սպասվում նաեւ հոկտեմբեր ամսին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ ԵՆ ՍՊԵՐՑՅԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի եւ ռուսական «Կրասնոդար»-ի ֆուտբոլիստ Էդուարդ Սպերցյանի ծառայություններով հետաքրքրված են իտալական ակումբներից մի քանիսը:

Այս մասին գրում են ռուսական ԶԼՄ-ները: Սպերցյանով հետաքրքրված են «Յուվենտուս»-ը, «Լացիո»-ն, «Նապոլի»-ն եւ «Ֆիորենտինա»-ն:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը Ռուսաստանի Պրեմիեր լիգայի 2023/24 մրցաշրջանի լավագույն կիսապաշտպաններից է: Ռուսաստանի ֆուտբոլի առաջնության ավարտված մրցաշրջանում Սպերցյանը մասնակցել է 29 հանդիպման, դարձել է 11 գոլի եւ 7 գոլային փոխանցման հեղինակ:

«Կրասնոդար»-ը դարձել է Ռուսաստանի ֆուտբոլի առաջնության փոխչեմպիոն:

2 ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ԵՆ ՆՎԱՃԵԼ

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի անդամներն ավարտեցին ելույթները միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող վարկանիշային մրցաշարում:

Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում կայացած մրցաշարում Հայաստանը նվաճել է 3 մեդալ՝ 2 ոսկի, 1 արծաթ:

Մրցաշարի ոսկե մեդալակիր է դարձել 61 կգ քաշային Արսեն Հարությունյանն, ով եզրափակչում գերազանցել է Ղրղզստանի ներկայացուցիչ Թահիրբեկ Ժումաշբեկուլուին:

70 կգ քաշային կարգի եզրափակչում մրցել են Հայաստանի հավաքականի ներկայացուցիչներ Վազգեն Թեւանյանը եւ Արման Անդրիասյանը: Եվրոպայի 2024 թվականի չեմպիոն Արման Անդրիասյանին հաջողվել է առավելության հասնել: Թեւանյանը նվաճել է արծաթե մեդալ:

Առավել վաղ Հայաստանի հավաքականից Փարիզի ամառային Օլիմպիական խաղերի ուղեգիր էին նվաճել Վազգեն Թեւանյանը եւ Արսեն Հարությունյանը:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիան Երեւանի քաղաքապետարանի հետ համատեղ հունիսի 10-15-ը մայրաքաղաքում կանցկացնի «Բռնցքամարտի Երեւան քաղաքի բաց առաջնություն» միջազգային մրցաշարը: Այս մասին հաղորդագրություն է տարածել Երեւանի քաղաքապետարանը:

Մասնակցության հայտ են ներկայացրել Բուլղարիայի, Իրանի, Լատվիայի, Հունգարիայի, Մոլդովայի, Ռուսաստանի, Վրաստանի եւ Հայաստանի շուրջ 150 մարզիկ:

Մրցումների սկիզբը՝ ժամը 13.00-ին, «Դինամո» մարզադահլիճում:

● Հունիսի 8-ին՝ ժամը 19:30-ին, Բոհեմ թատրոնում տեղի կունենա Ռաֆայել Երանոսյանի՝ «Փահլեւան» մոնոներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որ դիմորդներն արտոնություններից օգտվելու հնարավորություն ունեն:

Հրանուշ Կիրակոսյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ՝

1) Քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են՝

ա. ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,

բ. ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները:

2) Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

ա. 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք եւ մինչեւ 18 տարեկան հաշմանդամ երեխաները,

բ. առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան երեխաները:

3) Մրցութային հավասար միավորների դեպքում առավելություն է տրվում մարտական հերթապահություն իրականացնող, զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած եւ ծառայության դրական ցուցանիշներ ունեցող դիմորդին:

4) Առանց ընդունելության քննության ՀՀ կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով միջազգային օլիմպիադաների հաղթողները, տարբեր մարզաձեւերի գծով աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրները, որոնք ընդունելության դիմում-հայտում հայտագրել են համապատասխան մասնագիտությունները:

ՀՀ ԿԳՄՄՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցույթից դուրս՝ ըստ մասնագիտությունների՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված տեղերի:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՊԱՍՏԱՐԱՆ

ՀԱՐՑ. Մեկ անգամ ապաստարան ստանալու հայց ներկայացրել եմ, բայց սխալ կա մեջը. կարո՞ղ եմ էլի ներկայացնել:

Նարբե Աբրահամյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստանի դիմումի վերջնական (ներառյալ դատական կարգով) մերժումից հետո կարող եք կրկին դիմում ներկայացնել Միգրացիոն ծառայություն՝ Հայաստանում ապաստան ստանալու համար, եթե՝

- առաջացել են նոր հանգամանքներ, որոնք նախկին դիմումի քննության ժամանակ չեն եղել,
- Դուք ունեք նոր ապացույցներ, որոնք նախկին դիմումի քննարկման ժամանակ չեք կարողացել ներկայացնել:

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նոր դիմումի քննարկման ժամանակահատվածում Դուք ունեք ապաստան հայցող անձանց համար սահմանված նույն իրավունքները եւ պարտականությունները, որոնք ունեիք Ձեր առաջին դիմումի քննարկման ընթացքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ամուսնության տարիքային նվազագույն շեմը սահմանել 18 տարեկանը՝ առանց բացառությունների, հանել բոլոր այն կարգավորումները, որոնք վերաբերում են վաղ ամուսնություններին եւ անչափահաս ամուսիններին. ԱԺ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել ՔՊ պատգամավոր Ռուստամ Բաքոյանի ներկայացրած օրենսդրական այս նախագծին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 12 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +23 + 26
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 23 + 25 + 29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.6.2024**
Հասցեն՝ Գերաքրքրության մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*